

Հավելված
ՀՀ կառավարության 2010 թ.
նոյեմբերի 4-ի նիստի N 43
արձանագրային որոշման

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԵՐԱԶԻՆՄԱՆ ԵՎ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ

2010թ.

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱԴՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԿԱ ՎԻՃԱԿԻ
ԲՆՈՒԹԱԳԻՐԸ
2. ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ
3. ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ
4. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ
5. ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Մույն հայեցակարգը մշակվել է հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրով ամրագրված գյուղատնտեսության ճյուղի առանցքային դերը՝ երկրի պարենային ապահովության և գյուղական աղքատության կրճատման տեսանկյունից:
2. Գյուղատնտեսության ճյուղի զարգացման հիմնարար ուղղություններից մեկը համալիր մեքենայացումն է: Վերջինս ագրարային ոլորտի մրցունակության բարձրացման, գյուղատնտեսական արտադրանքների արտադրության ավելացման և ճյուղի արտադրական ներուժի լիարժեք օգտագործման հիմնական գործոններից մեկն է:
3. Վերջին երկու տասնամյակի ընթացքում գյուղատնտեսության մեքենատրակտորային հավաքակազմի նորացման տեմպերը խիստ ցածր են եղել, ուստի մաշվածության և անսարքության հետևանքով առկա տեխնիկայի օգտագործումը ցածր արտադրողական և ծախսատար է:
4. Միաժամանակ փոքր հողակտորների և դրանց մասնատվածության պայմաններում մեծանում է մեքենայական ագրեգատների պարապ ընթացքը և կրճատվում հիմնական աշխատանքի տևողությունը:
5. Հայեցակարգի իրականացումը որոշակի նախապայմաններ կստեղծի գյուղատնտեսության տեխնիկական վերազինման, հողօգտագործողների միջև համագործակցության տարբեր ձևերի խթանման և հողակտորների միավորման միջոցով հասնել գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման արդյունավետության բարձրացման:

1. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԿԱ ՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

6. Հանրապետությունում 1991 թվականից հետո իրականացված բարեփոխումների և սեփականաշնորհման գործընթացի արդյունքում հողերի մասնավորեցումն ուղեկցվել է նախկին 859 կոլտնտեսություններին, խորհունտեսություններին և միջտնտեսային կազմակերպություններին պատկանող գյուղատնտեսական տեխնիկայի սեփականաշնորհմամբ: Արդյունքում, ներկայումս գործում են շուրջ 339,2 հազ. գյուղացիական տնտեսություններ: Մեկ գյուղացիական տնտեսությանը միջին հաշվով բաժին է ընկնում 1.4 հա գյուղատնտեսական հողատեսքեր, որից 1.1 հա վարելահողեր, որոնք իրենց հերթին բաժանվում են 3-4 հողակտորների:

7. Տնտեսությունների փոքր չափերի պատճառով, սեփական տեխնիկա ունենալը նպատակահարմար չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ տեխնիկայի սեփականատերը մեխանիզատոր է և իրականացնում է վճարովի ծառայություններ:

8. Քանի որ, հողօգտագործողներն ազատ են մշակաբույսերի ընտրության հարցում և նույն հողագանգվածի տարբեր հատվածներում զբաղվում են տարբեր մշակաբույսերի արտադրությամբ, ապա որոշակի բանվորական գործընթացները կատարվում են ոչ մասիվ տարածությունների վրա և կարճ ժամանակահատվածում իրականացվում է տարբեր բնույթի մեքենայական աշխատանքներ:

9. 2009 թվականի հունվարի 1-ի դրությամբ (անկախ սեփականության ձևից) հանրապետությունում առկա է 1410 միավոր հացահատիկահավաք կոմբայն, 296 միավոր կերահավաք կոմբայն, 14663 միավոր բեռնատար ավտոմեքենա, գյուղատնտեսական նշանակության 14732 միավոր տարբեր տեսակի տրակտոր, որից 4976-ը՝ թրթուրավոր, 9756-ը՝ անիվավոր, այդ թվում 879 էքսկավատոր: Այդ քանակությունից մինչև 25 ձիաուժ հզորություն ունեցողները կազմում են 1405, 25-50 ձիաուժ՝ 2393, 50-100 ձիաուժ՝ 9681, 100 ավելի ձիաուժ՝ 1253 միավոր: Օժանդակ գյուղգործիքների քանակը կազմում է՝ տրակտորային կցասայլ՝ 6113 միավոր, խոտհնձիչ՝ 1867 միավոր, հատիկագտիչ մեքենա՝ 456 միավոր, շարքացան՝ 1774 միավոր, գութան՝ 3710 միավոր, փխրեցուցիչ՝ 1977 և միավոր, հավաքիչ-մամլիչ՝ 1376 միավոր (հավելված N 1):

10. Հավաքակայանի նորացման նպատակով 1976-1986թթ. տարեկան միջին հաշվով գյուղատնտեսական կազմակերպություններին է հատկացվել տարբեր մակնիշի շուրջ 1000 տրակտոր, 120 հացահատիկահավաք կոմբայն, 350 գութան, 320 կուլտիվատոր, 160 շարքացան և մեքենայացման այլ միջոցներ (հավելված N 2):

11. Գործող տեխնիկայի սահմանափակ քանակի և նոր ստեղծված գյուղացիական տնտեսությունների մեծ թվի հետևանքով դրանց միայն մի մասն է ապահովված սեփական միջոցներով: Ապահովվածության ցուցանիշը սարքին տեխնիկայի համար 100 գյուղացիական տնտեսության հաշվով կազմում է՝ կոմբայններինը՝ 0,3, տրակտորներինը՝ 3,4, տրակտորային կցասայլերինը՝ 1,6, գութաններինը՝ 0,9, շարքացաններինը՝ 0,46, խոտհնձիչներինը՝ 0,5, հավաքիչ-մամլիչներինը՝ 0,37 միավոր:

12. Գյուղատնտեսական տեխնիկայի հավաքակայանի տարիքային կազմի վերլուծությունից պարզվել է, որ օրինակ տրակտորների ընդհանուր թվի 15,4 %-ը շահագործվում է 30 տարուց ավելի, 32,8 %-ը՝ 26-30 տարի, 46,2 %-ը՝ 11-25 տարի և միայն 5,6%-ը՝

մինչև 10 տարի: Փաստորեն, շահագործվող տրակտորների 94,4%-ն օգտագործվում է 10 տարուց ավելի և անցել է ամորտիզացիայի համար սահմանված ժամկետները: Մաշված տեխնիկայի շահագործումը հանգեցնում է վառելանյութի և քսայուղերի գերածախսի, բերքի գերնորմատիվային կորուստների, թանկացնում նորոգման և տեխսպասարկման աշխատանքները (հավելված N 3):

13. Երկար տարիներ տեխնիկական նոր միջոցներով գրեթե չհամալրվելու, եղածը բարոյապես և ֆիզիկապես մաշվելու, ժամանակին չնորոգվելու, տեխնիկական խնամքներով չապահովվելու հետևանքով, աստիճանաբար նվազել է գյուղատնտեսական տեխնիկայի սարքինության մակարդակը: Առկա գյուղատնտեսական տեխնիկայի վիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ 2009 թվականի տարեսկզբին տեխնիկայի սարքինության ցուցանիշը կազմում էր՝ տրակտորներինը՝ 78.7, հացահատիկահավաք կոմբայններինը՝ 84.6, կերահավաք կոմբայններինը՝ 73.3, խոտհնձիչներինը՝ 86.3, տրակտորային կցասայլերինը՝ 87.5, գութաններինը՝ 86.7, կուլտիվատորներինը՝ 91.1 և այլն (հավելված N 4):

14. Վերջին տարիներին, ըստ էության, բացի ՉԺՀ-ի, Ճապոնիայի և Հնդկաստանի կառավարությունների դրամաշնորհների հաշվին և «Գյուղատնտեսական բարեփոխումներին աջակցության» ԾԻԳ-ի կողմից իրականացվող վարկային ծրագրի շրջանակներում ներկրված գյուղատնտեսական տեխնիկայից, այլ ներկրումներ գրեթե չեն եղել: Դրամաշնորհների հաշվին 1998-2010թթ. ընթացքում ներմուծվել են 116 հացահատիկահավաք կոմբայն և 885 տրակտոր՝ իրենց գյուղգործիքներով, երկարաժամկետ վարձակալության և աճուրդ-վաճառքի միջոցով դրանք հատկացվել են հողօգտագործողներին: Դրամաշնորհներով ստացված գյուղատնտեսական տեխնիկայի հետ ներմուծվել են գյուղատնտեսական գործիքներ և ընդհանուր արժեքի 10%-ի չափով անհրաժեշտ պահեստամասեր (հավելված N 5): «Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ – Հայաստան» ծրագրի «Ջրից դեպի շուկա» բաղադրիչի վարկային ծրագրի աջակցությամբ լիզինգային մատչելի մեխանիզմներով գյուղատնտեսությունում տնտեսավարողներին է տրամադրվել 32 միավոր անիվավոր տրակտոր:

15. Շատ դեպքերում մեքենայական աշխատանքների բարձր սակագների պատճառով ագրոտեխնիկական կանոններով պահանջվող մի շարք գործընթացներ չեն կատարվում կամ կատարվում են ձեռքով՝ խիստ բարձրացնելով մշակության աշխատատարությունը և խախտելով աշխատանքների կատարման լավագույն ժամկետները:

16. Գյուղատնտեսական տեխնիկայի մաշվածության հետևանքով մեծացել է նորոգումների և տեխնիկական սպասարկումների ծախսերը, որի հետևանքով բարձրանում են նաև ծառայությունների սակագները:

17. Գյուղատնտեսական տեխնիկայի հավաքակայանի վերազինման հարցում առկա դժվարություններն առնչվում են տեխնիկական շահագործող սուբյեկտների, սպասարկումների կարիք ունեցող գյուղացիական տնտեսությունների ֆինանսական սուղ հնարավորությունների, ներմուծվող մեքենայացման միջոցների և պահեստամասերի բարձր գների և այլ պատճառների հետ:

18. Գյուղատնտեսության նյութատեխնիկական մատակարարումների և արտադրատեխնիկական սպասարկումների ներկա վիճակի համակողմանի վերլուծությունը ցույց է տալիս, որ ոլորտում օրախնդիր է տեխնիկական վերազինմանն ուղղված նպատակային ծրագրերի մշակումը և դրանց հետևողական իրականացումը, հարցի վերաբերյալ պետական աջակցության քաղաքականության ծրագրավորումը, ոլորտի տնտեսական և տեխնիկական քաղաքականության ռազմավարության հստակեցումը:

2. ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

19. Հայեցակարգի նպատակն է նախանշել գյուղատնտեսական տեխնիկական վերազինման հիմնական ուղղությունները և գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացման միջոցով բարձրացնել գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման արդյունավետությունը:

20. Նշված նպատակի իրականացումը ենթադրում է լուծել հետևյալ հիմնական խնդիրները՝

- 1) պետություն-մասնավոր հատված համագործակցության շրջանակներում համատեղ գործունեության նպատակով կոոպերացված սուբյեկտներին գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերման համար երկարաժամկետ և արտոնյալ պայմաններով վարկերի տրամադրում.
- 2) արտաքին դրամաշնորհների շրջանակներում ստացված գյուղատնտեսական տեխնիկայի բաշխման մեխանիզմների բարելավում՝ առաջնությունը տալով կոոպերատիվների ձևավորման աջակցությանը.
- 3) հայկական շուկայում տեխնիկայի և պահեստամասերի մատակարարման, ինչպես նաև տեխնիկական սպասարկումների ցանցի ստեղծման համար

գյուղատնտեսական տեխնիկա արտադրող ընկերությունների հետ հարաբերությունների հաստատում.

- 4) գյուղատնտեսությունում մեքենայական աշխատանքների ծավալների ընդլայնում և ծառայությունների մատչելիության ապահովում:

3. ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

21. Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության պատվերով հոլանդական «ՊՈԻՄ» կազմակերպության փորձագետների կողմից կատարված ուսումնասիրությունների, Հայաստանի Հանրապետության վարչապետի մոտ կայացած խորհրդակցության, Հանրային խորհրդի ներկայացուցիչների, «Գյուղատնտեսական ասոցիացիաների ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության և գյուղատնտեսության ոլորտի մասնագետների հետ քննարկումների արդյունքում ձևավորվել է գյուղատնտեսության տեխնիկական վերազինման և գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման արդյունավետության բարձրացման հետևյալ հայեցակարգային մոտեցումները.

- 1) գյուղատնտեսության տեխնիկական վերազինման նպատակով բանակցել գյուղատնտեսական տեխնիկա արտադրող խոշոր ընկերությունների հետ, փոխշահավետ սկզբունքներով ընտրել այն ընկերություններին, որոնք պատրաստակամություն կդրսևորեն հայկական շուկայում ծավալելու գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարման և այդ տեխնիկայի սպասարկման ենթակառուցվածքներ ձևավորելու գործընթաց,
- 2) գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող մասնակից ֆինանսական կազմակերպություններին, գյուղատնտեսությունում իրականացվող վարկային, դրամաշնորհային ծրագրերի համապատասխան բաղադրիչներով, աջակցել գյուղատնտեսական տեխնիկայի ձեռք բերման մատչելի վարկերի տրամադրման և լիզինգային գործարքների կատարման համար,
- 3) նկատի ունենալ, որ գյուղատնտեսական տեխնիկայի ձեռք բերման և դրանց արդյունավետ օգտագործման նպաստավոր պայմաններ և հնարավորություններ կարող են ունենալ կոոպերացված գյուղատնտեսական սուբյեկտները, անհրաժեշտ է վերոհիշյալ մեխանիզմներով աջակցության առաջնային սուբյեկտներ ընտրել

գյուղատնտեսական կոոպերատիվներին: Այդ մոտեցումը կարող է նպաստել ինչպես կայացած կոոպերատիվների ամրապնդմանը, այնպես էլ շնորհիվ աջակցության այս մեխանիզմների՝ նոր ձևավորվող կոոպերատիվների կարողությունների հզորացմանը: Կոոպերատիվները, բացի մեքենայական աշխատանքների մատուցումից, կարող են իրականացնել արտադրատեխնիկական սպասարկումներ և մարկեթինգային ծառայություններ,

4) որպես նախորդ ենթակետի գործնական դրսևորում անհրաժեշտ է ճապոնական դրամաշնորհի հաշվին 2010 թվականին հանրապետություն ներմուծված գյուղատնտեսական տեխնիկական Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված նվազագույն գնին համապատասխանող մեկնարկային գնով, աճուրդային կարգով վաճառել սույն հայեցակարգով սահմանվող չափորոշիչներին բավարարող գյուղատնտեսական կոոպերատիվներին:

22. 2010 թվականին ճապոնական դրամաշնորհի հաշվին ներմուծված գյուղատնտեսական տեխնիկական գյուղատնտեսական կոոպերատիվներին տրամադրվելու է հետևյալ մեխանիզմով.

- 1) մարզային և տարածաշրջանային մակարդակով գյուղատնտեսական տեխնիկայի ապահովվածության փաստացի մակարդակի գնահատում,
- 2) մեքենայական աշխատանքներ իրականացող կոոպերատիվների ընտրությունը պետք է կատարվի մրցութային կարգով,
- 3) մեքենայական աշխատանքների իրականացման մրցույթին մասնակից կոոպերատիվները պետք է ներկայացնեն հայտ (հավելված N 6) և համապատասխանեն հետևյալ պահանջներին.

ա. կոոպերատիվի անդամների թիվը պետք է պակաս չլինի 15-ից և կոոպերատիվին սեփականության իրավունքով և վարձակալված պատկանող մշակովի հողատարածքը (վարելահողեր և բազմամյա տնկարկներ)՝ 40 հեկտարից,

բ. կոոպերատիվը կամ կոոպերատիվի անդամները պետք է ունենան գյուղատնտեսության մեքենայական աշխատանքների իրականացման փորձ, սեփական և (կամ) վարձակալված գյուղատնտեսական տեխնիկա,

4) մեքենայական աշխատանքներ իրականացնող կոոպերատիվների ընտրության մրցույթի հայտարարում, հայտերի ընդունում և սուբյեկտների ընտրություն: Մրցութային հանձնաժողովները պետք է կազմվեն շահագրգիռ պետական կառավարման

և տեղական ինքնակառավարման մարմինների և ոլորտի հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից,

5) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հանրապետությանը տրամադրված դրամաշնորհային տեխնիկայի գների սահմանում և արտոնյալ գներով (սահմանված նվազագույն մեկնարկային գնով) տեխնիկայի աճուրդային վաճառք ընտրված սուբյեկտներին,

6) ընտրված գյուղատնտեսական կոոպերատիվների և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կողմից լիազորված մարմնի միջև համագործակցության պայմանագրի կնքում, որը ներառում է հետևյալ հիմնական դրույթները.

ա. ընտրված գյուղատնտեսական կոոպերատիվները պարտավորվում են՝ 3 տարվա ընթացքում տարաժամկետ վճարումների ժամանակացույցով տեխնիկայի արժեքի վճարում, գյուղատնտեսական տեխնիկայի արդյունավետ շահագործում, պահպանություն, պարբերական զննում, հիմնական և ընթացիկ նորոգումների իրականացում, կոոպերատիվի անդամների համար ընդհանուր ժողովի կողմից որոշված սակագներով ծառայությունների մատուցում, պայմանագրով սահմանված կարգով տեղեկատվության ներկայացում,

բ. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կողմից լիազորված մարմինը պարտավորվում է՝ ընտրված գյուղատնտեսական կոոպերատիվներին ցուցաբերել բազմակողմանի տեխնիկական աջակցություն (մասնագետների ուսուցում, տեխնիկայի, պահեստամասերի, վառելանյութերի և քսայուղերի մեծածախ գնումների մասին տեղեկատվության, ինչպես նաև համաչափ ծանրաբեռնվածության ապահովման նպատակով խորհրդատվության տրամադրում):

23. Գյուղատնտեսության մեքենատրակտորային հավաքակալանի հետագա համալրումը հիմնականում կարող է իրականացվել լիզինգային մեխանիզմներով: Լիզինգի զարգացման նպատակով անհրաժեշտ է ՀՀ օրենսդրության կատարելագործում, 7-10 տարի ժամկետով, հայկական դրամով և մատչելի տոկոսադրույքով լիզինգային գործարքների իրականացում:

4. ՈՒՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

24. Վերը նշված մեխանիզմներով մեքենայական աշխատանքների իրականացումը կապված է մի շարք ռիսկերի հետ: Մասնավորապես՝

- 1) ներկայումս գյուղատնտեսությունում մեքենայական աշխատանքներն հիմնականում իրականացվում են տեխնիկայի սեփականատեր ֆիզիկական անձանց միջոցով, որոնց գործունեությունը չի հարկվում: Արտադրատեխնիկական ծառայություններ իրականացնող գյուղատնտեսական կոոպերատիվները որպես իրավաբանական անձինք գործունեության առաջին իսկ օրվանից հարկվելու են: Սա անխուսափելիորեն կստեղծի անհավասար մրցակցային պայմաններ: Ուստի նպատակահարմար է գործունեության առաջին երեք տարիներին կոոպերատիվներին տրամադրել պետական աջակցություն (նպատակային վարկեր, վարկերի տոտոկոսադրույքի սուբսիդավորում և այլն): Հետագայում ի հաշիվ մասշտաբի էֆեկտի և աշխատանքի կազմակերպման ռացիոնալացման կոոպերատիվները ձեռք կբերեն մրցակցային առավելություններ,
- 2) տնտեսությունների փոքր չափերը և հողատեսքերի կտրտվածությունը խիստ բացասաբար է ազդում տեխնիկայի արտադրողականության վրա, ուստի զուգահեռաբար միջոցառումներ պետք է ձեռնարկել տնտեսությունների խոշորացման և հողերի միավորման ուղղությամբ,
- 3) գյուղատնտեսական մեքենայական աշխատանքներ իրականացնող կոոպերատիվների տեխնիկական հավաքակազմի համալրումը պահանջում է մեծածավալ ներդրումներ, որի փոխհատուցման ժամկետը բավականին երկար է, ուստի ներդրողների կողմից այս բիզնեսի նկատմամբ շահագրգռվածությունը թույլ է: Անհրաժեշտ է տեխնիկա արտադրող ընկերությունների, Հայաստանի Հանրապետության կառավարության և գյուղատնտեսական մեքենայական աշխատանքներ իրականացնող կոոպերատիվների եռակողմ համագործակցության արդյունքում ձեռք բերել արտոնյալ փոխառություն և այդ միջոցներով ձեռք բերել ինչպես նոր, այնպես էլ օգտագործված տեխնիկա:

5. ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՑՈՒՆՔՆԵՐԸ

25. Կձևավորվեն արդյունավետ մենեջմենթով գործող, նոր տեխնիկական միջոցներով հագեցած գյուղատնտեսական մեքենայական աշխատանքներ իրականացնող կոոպերատիվներ:

26. Գյուղատնտեսական մեքենայական աշխատանքների արդյունավետ կազմակերպման, արտադրողականության բարձրացման, օգտագործվող ռեսուրսների կենտրոնացված ձեռք բերման արդյունքում կնվազի մեքենայական աշխատանքներով սպասարկումների ծախսերը:

27. Կընդարձակվեն գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները և կավելացվեն գյուղատնտեսական տեղական արտադրանքի արտադրության և վերամշակման ծավալները: Հնարավոր կլինի հանրապետությունում գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները մինչև 2020թ. հասցնել 420 հազ. հա-ի, ներկայիս 300-305 հազ. հա-ի դիմաց:

28. Գյուղատնտեսության մեքենայացման մակարդակի բարձրացման և մատչելի սակագներով իրականացվող ծառայությունների շնորհիվ արտադրանքի ինքնարժեքում կկրճատվեն ձեռքի աշխատանքի և սպասարկման ծառայությունների դիմաց կատարվող չհիմնավորված բարձր ծախսերը, որի արդյունքում կմեծանա տեղական արտադրանքի մրցունակությունը:

29. Առաջիկա 5 տարիներին մեքենայացման մակարդակի բարձրացման արդյունքում գյուղատնտեսությունում աշխատանքի արտադրողականությունը կբարձրանա 20 տոկոսով:

30. Հողի մշակության ագրոտեխնիկական պահանջների պահպանման արդյունքում գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը կավելանա 10-15 տոկոսով:

31. Կոոպերատիվները հնարավորություն կունենան արդյունավետ շահագործելու նոր տեխնիկական միջոցները, գոտիականության հաշվառմամբ դրանք օգտագործելու նաև այլ մարզերի գյուղատնտեսական կարիքների բարելավման նպատակով:

32. Պայմաններ կստեղծվեն գյուղատնտեսական կոոպերատիվների ամրապնդման և զարգացման համար:

33. Պետություն-մասնավոր հատված համագործակցության արդյունքում գյուղատնտեսական կոոպերատիվների գործունեության ընդլայնմամբ կավելանան հարկային մուտքերը ՀՀ պետական բյուջե:

Հավելված N 1
Գյուղատնտեսության տեխնիկական վերազինման և
գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման
արդյունավետության բարձրացման հայեցակարգի

**Հայաստանի Հանրապետությունում հիմնական գյուղատնտեսական տեխնիկայի քանակը
2009 թվականի հունվարի 1-ի դրությամբ (ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալներով)**

(միավոր)

Մարզերի անվանումը	Տրակտորներ (տարբեր տեսակի)	Հացահատիկահավաք կոմբայններ	Կերահավաք կոմբայններ	Տրակտորային կցասայլակներ	Տրակտորային խոտհնձիչներ	Հատիկագտիչ մեքենաներ	Տրակտորային շարժացաններ	Տրակտորային գութաններ	Կուլտիվատորներ	Հավաքիչ-մամլիչներ	Բեռնատար ավտոմեքենաներ
Արագածոտն	1255	179	32	618	140	50	202	381	272	142	1250
Արարատ	1260	35	20	571	121	32	167	394	289	103	1095
Արմավիր	1780	63	19	855	124	35	201	496	328	93	1229
Գեղարքունիք	2645	292	107	825	301	76	316	429	202	253	2734
Լոռի	1658	108	8	686	375	46	152	401	197	130	1615
Կոտայք	753	86	15	373	138	34	104	260	108	137	1652
Շիրակ	1597	300	58	774	177	56	347	518	357	157	1233
Սյունիք	1130	172	18	556	251	92	192	369	102	234	1023
Վայոց ձոր	797	40	1	250	113	12	13	120	12	66	792
Տավուշ	1170	80	12	552	116	23	72	306	96	56	2040
Երևան	687	55	6	53	11	-	8	36	14	5	-
ԸՆԴԱՄԵՆԸ	14732	1410	296	6113	1867	456	1774	3710	1977	1376	14663

Հավելված N 2
Գյուղատնտեսության տեխնիկական վերազինման և
գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման
արդյունավետության բարձրացման հայեցակարգի

Հայաստանի Հանրապետությունում առկա հիմնական գյուղատնտեսական
տեխնիկայի տարիքային կազմը

Թողարկման տարեթիվը	Տրակտորներ				Ընդամենը տրակտորներ		Հացահատիկահավաք կոմբայններ	
	Թրթուրավոր		Անհվավոր		հատ	% -ը ընդ. նկատմամբ	հատ	% -ը ընդ. նկատմամբ
	հատ	% -ը ընդ. նկատմամբ	հատ	% -ը ընդ. նկատմամբ				
1976	222		285		507		98	
1977	181		621		802		110	
1978	320		642		962		114	
1979	453		599		1052		112	
1980	414		594		1008		100	
	1590	31.9	2741	28.1	4331	29.4	534	37,8
1981	514		461		975		121	
1982	294		596		890		152	
1983	265		640		905		116	
1984	229		471		700		99	
1985	292		613		905		110	
	1594	32.1	2781	28.5	4375	29.7	598	42,4
1986	375		530		905		54	
1987	334		680		1014		38	
1988	301		723		1024		50	
1989	303		808		1111		12	
1990	147		463		610		8	
	1460	29.3	3204	32.9	4664	31.7	162	11,5
1991	329		178		507		-	
1992	3		12		15		-	
1993	-		-		-		-	
1994	-		-		-		-	
1995	-		-		-		-	
	332	6.7	190	1.9	522	3.5	-	0
1996	-		-		-		-	
1997	-		-		-		15	
1998	-		25		25		18	
1999	-		50		50		13	
2000	-		156		156		-	
	-	-	231	2.3	231	1.6	46	3.3
2001	-		45		45		-	
2002	-		28		28		7	
2003	-		40		40		-	
2004	-		51		51		-	
2005	-		109		109		-	
	-	-	273	2.8	273	1.9	7	0.5
2006	-		246		246		51	
2007	-		11		11		5	
2008	-		79		79		7	
2009	-		-		-		-	
	-	-	336	3.4	336	2.2	63	4.5
Ընդամենը	4976	100.0	9756	100.0	14732	100.0	1410	100.0

Հավելված N 3
Գյուղատնտեսության տեխնիկական վերազինման և
գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման
արդյունավետության բարձրացման հայեցակարգի

**ՀՀ անիվավոր և թրթուրավոր տրակտորների խմբավորումն
ըստ շահագործման ժամկետների**

Խմբերը	Շահագործման ժամկետները	Տրակտոր- ների թիվը, տարի	Տեսակա- բար կշիռը	Շահագործ- ման ծախ- սերի փոփո- խությունը, %	Ժամային արտադրո- ղականու- թյան փո- փոխու- թյունը, %	1 էտայր- նային հեկտարի հաշվով վառելիքի ծախսը, կգ
I	1-10	830	5,6	100	100	18
II	11-20	2243	15,2	115	89	21
III	21-25	4558	31	122	80	25
IV	26-30	4830	32,8	148	71	28
V	30-ից ավելի	2271	15,4	155	60	30
Ընդամենը		14732	100	X	X	24,4

Հայաստանի Հանրապետությունում հիմնական գյուղատնտեսական տեխնիկայի սարքիչության մակարդակը
2009 թվականի հունվարի 1-ի դրությամբ (պաշտոնական տվյալներով)

Մարզերի անվանումը	Տրակտորներ (տարբեր տեսակի)			Հացահատիկահավաք կոմբայներ			Կերատնտեսական կոմբայներ			Տրակտորային կցառայվակներ			Տրակտորային խտրոնձիչներ			Հատիկագոյի մեքենաներ			Տրակտորային շարժացաններ			Տրակտորային գույքաներ			Կուլտիվատոր-ներ			Հավաքիչ-մամլիչներ			Բնօժանոթ ավտոմեքենաներ		
	առկա քանակը (հատ)	որից սարքիչ վիճակում (հատ)	սարքիչության մակարդակը, %	առկա քանակը (հատ)	որից սարքիչ վիճակում (հատ)	սարքիչության մակարդակը, %	առկա քանակը (հատ)	որից սարքիչ վիճակում (հատ)	սարքիչության մակարդակը, %	առկա քանակը (հատ)	որից սարքիչ վիճակում (հատ)	սարքիչության մակարդակը, %	առկա քանակը (հատ)	որից սարքիչ վիճակում (հատ)	սարքիչության մակարդակը, %	առկա քանակը (հատ)	որից սարքիչ վիճակում (հատ)	սարքիչության մակարդակը, %	առկա քանակը (հատ)	որից սարքիչ վիճակում (հատ)	սարքիչության մակարդակը, %	առկա քանակը (հատ)	որից սարքիչ վիճակում (հատ)	սարքիչության մակարդակը, %	առկա քանակը (հատ)	որից սարքիչ վիճակում (հատ)	սարքիչության մակարդակը, %	առկա քանակը (հատ)	որից սարքիչ վիճակում (հատ)	սարքիչության մակարդակը, %			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34
Արագածոտն	1255	928	73.9	179	142	79.3	32	26	81.3	618	553	89.5	140	106	75.7	50	35	70	202	178	88.1	381	328	86.1	272	241	88.6	142	132	93	1250	892	71.4
Արարատ	1260	963	76.4	35	30	85.7	20	12	60	571	499	87.4	121	107	88.4	32	25	78.1	167	144	86.2	394	367	93.1	289	256	88.6	103	93	90.3	1095	841	76.8
Արմավիր	1780	1512	84.9	63	57	90.5	19	15	78.9	855	751	87.8	124	119	96	35	33	94.3	201	192	95.5	496	470	94.8	328	299	91.2	93	91	97.8	1229	912	74.2
Գեղարքունիք	2645	2166	81.9	292	269	92.1	107	82	76.6	825	783	94.9	301	263	87.4	76	60	78.9	316	293	92.7	429	310	72.3	202	187	92.6	253	229	90.5	2734	2068	75.6
Լոռի	1658	1312	79.1	108	89	82.4	8	5	62.5	686	588	85.7	375	323	86.1	46	40	87	152	124	81.6	401	347	86.5	197	178	90.4	130	116	89.2	1615	1197	74.1
Կոտայք	753	600	79.7	86	78	90.7	15	11	73.3	373	326	87.4	138	116	84.1	34	29	85.3	104	90	86.5	260	228	87.7	108	96	88.9	137	126	92	1652	1320	79.9

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34
Շիրակ	1597	1240	77.6	300	245	81.7	58	41	70.7	774	628	81.1	177	146	82.5	56	46	82.1	347	300	86.5	518	439	84.7	357	347	97.2	157	121	77.1	1233	870	70.6
Սյունիք	1130	883	78.1	172	143	83.1	18	17	94.4	556	511	91.9	251	226	90	92	84	91.3	192	187	97.4	369	342	92.7	102	97	95.1	234	228	97.4	1023	799	78.1
Վայոց ձոր	797	692	86.8	40	36	90	1	-	-	250	218	87.2	113	99	87.6	12	12	100	13	12	92.3	120	106	88.3	12	12	100	66	61	92.4	792	583	73.6
Տավուշ	1170	809	69.1	80	57	71.3	12	2	16.7	552	438	79.3	116	96	82.8	23	12	52.2	72	54	75	306	246	80.4	96	75	78.1	56	45	80.4	2040	1538	75.4
Երևան	687	491	71.5	55	50	90.9	6	6	100	53	52	98.1	11	11	100	-	-	-	8	8	100	36	33	91.7	14	13	92.9	5	5	100	-	-	-
ԸՆԴԱՄԵՆԸ	14732	11596	78.7	1410	1196	84.8	296	217	73.3	6113	5347	87.5	1867	1612	86.3	456	376	82.5	1774	1582	892	3710	3216	867	1977	1801	91.1	1376	1247	906	14663	11020	752

Օտարերկրյա դրամաշնորհների հաշվին Հայաստանի Հանրապետություն
ներկրված գյուղատնտեսական տեխնիկայի մասին

Մարզերի անվանումը	1997թ. ճապ.	1998թ. ճապ.		1999թ. ճապ.		2000թ. ճապ.	2000թ. ՉԺՀ	2001թ. ճապ.	2002թ. ճապ.		2003թ. ՉԺՀ	2004թ. ՉԺՀ	2005թ. ճապ.	2005թ. Չնդ.	2006թ. Չնդ.	2006թ. ՉԺՀ	2007թ. ճապ.		2008թ. ՉԺՀ		2008թ. ճապ.		Ընդամենը		
	Կումբայն CK-5M "Hiva"	Կումբայն Bizon Record Z058	Տրակտոր Kubota L2500DT	Կումբայն Sampo SR 2035	Տրակտոր Shibaura S325	Տրակտոր New Holland 55-56DT	Տրակտոր HB-204	Տրակտոր New Holland 55-56DT	Կումբայն Sampo SR 2035	Տրակտոր New Holland 55-56DT	Տրակտոր FT-404	Տրակտոր FT-404	Տրակտոր Kubota M5700	Տրակտոր Sonalika DJ-60	Տրակտոր Same-603	Կումբայն LZ-1,28 4LZ-2,5	Կումբայն CK-5MՅ1 "Hiva Յփֆեք"	Տրակտոր Belarus-572	Կումբայն 4LZ-4, 4LZ-3	Տրակտոր YTO-804	Կումբայն CK-5M "Hiva"	Տրակտոր MT3-82.1	Կումբայն	Տրակտոր*	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	
Արագածոտն		1	1	1	6	10	8	6		4	5	4	4	3	18	5		1		5		2	7	77	
Արարատ		1	2	1	4	8	8	5	1	3	5	6	5	7	24	2		3		7		1	5	88	
Արմավիր	2	2	1		4	8	5	5	1	2	4	5	5	14	45	4		2		2		5	9	107	
Գեղարքունիք		2	2	2	6	9	6	6	1	4	5	6	3	4	25	11	2	1		5	1	4	19	86	

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25
Լոռի	3	2	2		4	7	7	6	1	3	3	3	2	1	8	3			1	4		2	10	52
Կոտայք	6	1	3	1	8	8	10	4	1	3	4	5	4	11	17	7	1	3		2		5	17	87
Շիրակ	2	2	2	4	7	9	8	4	2	3	4	6	3	3	25	3	1			5		2	14	81
Սյունիք	2	2	4	2	4	8	10	3		3	2	5	6	3	11	6		1		2	2	2	14	64
Վայոց ձոր		1	2	1	3	4	6	2		1	1		3	1	6	5				2		1	7	32
Տավուշ		1	2	1	3	4	5	4		1	3	6	3	2	31	2	1			4	1	2	6	70
Երևան		3	4		1	3	3			1	1	2	1	7	20					6		3	3	52
ԼՂՀ						2					3	3		4	10	3			1	6	1		5	28
Ընդամենը	15	18	25	13	50	78	78	45	7	28	40	51	39	60	240	51	5	11	2	50	5	29	116	824

* նշվածից բացի 2010թ. Ճապոնական դրամաշնորհի հաշվին հանրապետություն է ներմուծվել 61 միավոր USSQ-82 մակնիշի տրակտոր

**Մրցութային հայտ
դրամաշնորհային ծրագրով ՀՀ կառավարությանը հատկացված
գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերման**

ՀՀ _____ մարզի _____ տարածաշրջանի
_____ համայնքի _____ կոոպերատիվը
գյուղատնտեսական մեքենայական աշխատանքների իրականացման նպատակով
խնդրում է իրեն ընդգրկել դրամաշնորհային ծրագրով ՀՀ կառավարությանը
հատկացված գյուղատնտեսական տեխնիկայի բաշխման ցուցակում և հատկացնել
_____ մակնիշի _____ միավոր տրակտոր, _____ մակնիշի _____ միավոր
գյուղատնտեսական մեքենա:

Կոոպերատիվն ունի.

- _____ անդամ,
- սեփական և վարձակալված _____ հա գյուղատնտեսական հողատեսքեր,
որից՝ վարելահող՝ _____ հա, բազմամյա տնկարկներ _____ հա, խոտհարքներ _____ հա,
արոտավայրեր _____ հա,
- _____ միավոր գյուղատնտեսական տեխնիկա, այդ թվում՝ _____
մակնիշի տրակտոր _____ հատ, _____ մակնիշի կոմբայն _____ հատ,
գյուղգործիքներ, ընդամենը _____ հատ, որից գութան _____ հատ, շարքացան _____ հատ,
կուլտիվատոր _____ հատ, կցասայլ _____ հատ, խոտհնձիչ _____ հատ և այլն (նշել բոլորը),
- կոոպերատիվի անդամներից տրակտորիստ-մեքենավարի որակավորում
ունեցող _____ հոգի,
- նորոգման արհեստանոց _____ ք.մ.,
- նորոգումների համար անհրաժեշտ սարքավորումներ և հաստոցներ (նշել),
- տեխնիկայի պահպանման ծածկեր,
- այլ պայմաններ (նշել):

Բացի կոոպերատիվի անդամների մշակովի հողակտորներից պարտավորվում ենք ագրոտեխնիկական պահանջներին համապատասխան սպասարկել _____ համայնքի և հարակից _____ համայնքների գյուղացիական տնտեսություններին, որոնք ունեն շուրջ _____ հա գյուղատնտեսական մշակովի հողատեսքեր (վարելահող, բազմամյա տնկարկ):

Կոոպերատիվի նախագահ _____
(անունը, ազգանունը)

(ստորագրությունը)